

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/1

15 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի ժիրայր Մնացականյանի 30.07.2015 թ-ի դիմում-գանգատը «ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան պետի 10.07.2015 թ-ի թիվ 1417 գրության դեմ:

Քաղաքացի ժիրայր Մնացականյանի գանգատում բերված փաստարկները.

Քաղաքացի ժիրայր Մնացականյանը հայտնում է, որ իր որդին՝ «Քաղաքացի Միեր Մնացականյանը 04.05.2015 թ-ին դիմել է «Ֆինանսների նախարարություն 07.05.2015թ. Մ-7057 և խնդրել է իր 2010 թ-ի արտադրության VAZ 21074 մակնիշի անձնական օգտագործման ավտոմեքենան, որով Ռուսաստանի Դաշնությունից մշտական բնակության նպատակով ժամանել է Հայաստանի Հանրապետություն, թույլատրել ձևակերպել արտոնություններին համապատասխան: Սակայն անտեսելով ներկայացված բազմաթիվ փաստաթղթերը, որոնք հավաստում են նրա այդ իրավունքը, «ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան պետն իր 10.07.2015 թ-ի թիվ 1417 գրությամբ դիմումը մերժել է:

Ելնելով վերոգրյալից՝ քաղաքացի ժիրայր Մնացականյանը խնդրում է վերոգրյալ հարցին տալ դրական լուծում:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Քաղաքացի Միեր Մնացականյանը 04.05.2015 թ-ին դիմել է «Ֆինանսների նախարարություն 2010 թ-ի արտադրության VAZ 21074 մակնիշի անձնական օգտագործման ավտոմեքենան, որով նա Ռուսաստանի Դաշնությունից մշտական բնակության նպատակով ժամանել է Հայաստանի Հանրապետություն, թույլատրել ձևակերպել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնություններին համապատասխան:

«ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան պետի 10.07.2015 թ-ի թիվ 1417 գրությամբ (այսուհետ նաև Գրություն) Միեր Մնացականյանի վերոգրյալ դիմումը մերժել է: Այսպես, Գրությունում մասնավորապես նշվել է, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք է համարվում ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Ըստ Գրության, հաշվի առնելով, որ Միեր Մնացականյանը ՀՀ-ում հաշվառված է դեռևս 2003թ-ից, իսկ համաձայն թիվ 4008N296508 տեխ. անձնագրի խնդրո առարկա ավտոմեքենան նրա անունով հաշվառվել է 2010թ-ին, ուստի հնարավոր չէ 09.04.2015թ. թիվ F21819 հայտարարագրով ՀՀ ներմուծված ավտոմեքենայի ձևակերպումները կատարել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնությամբ:

Սույն գործի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու նպատակով ՀՀ ՖՆ համապատասխան ստորաբաժանումից ձեռք են բերվել տեղեկություններ Միեր Մնացականյանի կողմից ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ: Ստացված տեղեկությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Միեր Մնացականյանը բավարարում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնությունից օգտվելու համար, հետևյալ պատճառաբանությամբ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերի դրույթները: Մասնավորապես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք են համարվում մշտական բնակության ժամանելու օրվան նախորդող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ հարկադիր տեղահանվածների և փախստականների, որոնց համար Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակվելու հանգամանքը հաշվի չի առնվում»:

Նույն հոդվածի 14-րդ կետի համաձայն. «Սույն օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 184 օր և ավելի»:

Քննարկվող դեպքում ստացված տեղեկությունների համաձայն Միեր Մնացականյանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանած անձ, քանի որ մշտական բնակության ժամանելու օրվան նախորդող ժամանակահատվածում առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, այն է՝ դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ նա 184 օր և ավելի բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում Միեր Մնացականյանը կարող է օգտվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված արտոնությունից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Քաղաքացի Ժիրայր Մնացականյանի 30.07.2015 թ-ի դիմում-զանգառը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ